

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1933 - Մայիս - թիվ 5

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Փեչիկեան Հ. Եղիա. — Արձագանդներ նահատակներու տօնէն և Լուսանորոգի յիշատակէն 193

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Փեչիկեան Հ. Եղիա. — Հայկական նըշխարներ ու նշմարներ Խաչիոյ մէջ (Ա. Ի Հոռմ 197
Սափրաստեան Ա. — Խուրրի աշխարհը և Խուրրիներ 201
Գառնեան Խաչիկ քահանայ. — Քրիստոսի եկեղեցին միայն մէկ է 219

ԳՐԱԿԱՆ

Թումանեան Յ. — Դարամիջի ժամին . 196
Երեմեան Հ. Սիմոն. — Չեօկուրեան Տիգրան 208
Սրապեան Արամայիս. — Ողջերուն ձայնը (Ապրիլեան զոհերուն) 212
Դաւիթեան Յ. — Վարուժան 213
Յովնանեան Հ. Վահան. — Նունուֆարները — Վարդը սափորին մէջ 214
Արսէն Երկար. — Լքուած տաճար — Խորհուրդի ուխտաւոր 215

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Երեմեան Հ. Սիմոն. — «Ինչպէս վարել արդի կեանքը» — «Երեքդարեան պատմութիւն Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ Պալատու» (գրեց՝ Մելգոն Ածատուր) 216
Քիւրտեան Յ. — «Travels in Persia» (գրեց՝ Thomas Herbert) — «Persian Art» 217

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

Սարգսեան Հ. Գրիգոր. — «Բամբեր»ին դէմ 234

ԱՅԼԵԻԱՅԼՔ

Բեղլեկիւնոյ. — Քաղաքական տեսութիւն 235
Դաւիթեան Յ. — Ազգայնականութիւն և միջազգայնականութիւն 238
Խմբ. — Մեզմէ անդարձ մեկնողներ (Աւետիք Սահակեան, Օհան Կարօ, Փրոֆ. Յարութիւն Ունճեան) 239
— Հանգիստ հոգւոյ Գերայ. Յ. Գուգեան Եպիսկոպոսի 240

SOMMAIRE

1933 - Mais - numéro 5

p.

Paitchikian P. Elie. — Echos des fêtes de nos martyrs et du Vén. Abbé Mékhithar 193

ACADEMIE ARMENIENNE

Paitchikian P. E. — Mémoires historiques arméniennes en Italie - (I. à Rome) 197
Safrastian A. — Les Khourris. 201
Prêtre Krouzian Khatchig. — « L'Eglise du Christ est une » 219

LITTERATURE

Toumanian H. — A l'heure entre les deux siècles (1901) (poésie) 196
Eremian P. S. — Tchögurian Tigran (A nos martyrs) (poésie). 212
Davidian A. — A Varoujan (poésie) 213
Hovhannessian P. V. — Les Nénufars — La Rose dans le vase 214
Arsen Yergath. — L'église abandonné — Pèlerin du mystère (poésie) . 215

RECENSION

Eremian P. S. — «Comment conduire la vie moderne» — «Histoire des trois siècles de l'église St. Archange de Balath» (à Stambul) (par Melcon As-sadour) 216
Kurdian H. — «Travels in Persia» (par Thomas Herbert) — «Persian Art» 217

PRESSE ARMENIENNE

Sarkissian P. G. — Le Christ est-il chrétien? (au journal «Panper») 234

DIVERS

Pellegrino. — Vie internationale . 235
Davidian A. — Le nationalisme et l'internationalisme 238
Réd. — † Avédik Sahakian, Ohan Garo, Prof. A. Oundjian 239
— † Mons. Jean Kouzian Evêque des arméniens-catholiques d'Egypte 240

ՄԱՅԻՍ - ԹԻՒ 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒՆ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑԱԿԱՆ

1843-1933

ՀԱՏ. ՂԱ. ՌԵԶԲ-ՌԵԶԳ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՏՕՆԷՆ

ԼՈՒՍԱՆՈՐՈԳԻ ՅԻՇԱՏԱԿԷՆ

Ի ԶՈՒՐ չէր որ երէկ մեր Նահատակներու տօնը կատարեցինք ազգովին: Յաղթա-
նակի հանդէս մը՝ որուն վրայ կու գայ կարծես իր լալկան ստուերը ձգել խորձ եւ
անստեղի որակում մը՝ Սգատօն մը, որ ոմանց անգիտակից բերաններէն կ'անցնի նաեւ
հայ մամուլին մէջ:

Այդպիսի կոչում մը իսկապէս հակասական է եւ անարժան ամէն կերպով: Եւ հա-
կասութիւն այնքան աւելի ցայտուն՝ երբ նկատենք այդ սուգը անոնց համար որոնք
արիւնքներն ունեցան մահը դիմագրաւել եւ իրենց անուշ արեւը զոհել յանուն եւ ի
փառս իրենց հայրենեան եւ մանաւանդ իրենց քրիստոնէութեան:

Եւ միմէ կարելի է ատկէ աւելի սրբազան դատ մը յղանալ եւ կամ ատկէ սրբա-
գոյն նպատակի մը համար նուիրագործել գիտակցաբար իր համակ էութիւնը: Զէ՞ որ
հայրենիքի նուիրողը հոգիները ամբողջ ազգին պաշտօնը կը ստանան, դիւցազներ կը
կոչուին եւ աստուածացած կը ցուցադրուին որպէս օրինակ՝ բոլոր ցեղին եւ իր սե-
րունդներուն: Անուններ զորս կրելը մեծագոյն պարծանք է եւ խման բարձրանալու
եւ բարձրացնելու. անուններ փառքով ոսկեծիր հայրենիքի պատմութեան եւ ազգին
սրտին մէջ:

Եւ մեր Նահատակները լոկ հայրենիքի համար չէր որ Նահատակուեցան: Եւ անա
դիւցազնութեան վրայ սրբութեան լուսավազակ մ'ալ հարկ է աւելցնենք:

Սգալ դիւցազներու եւ սուրբերու մահը՝ որ գերազանց անմահութիւն մ'է, մեղապարտ
տգիտութենէ զատ՝ անարգանք մըն է իրենց:

ԲԱԶՄ. ՄԱՅԻՍ 1933

13



Փանք անոնց, դափնիններ անոնց, յաղթանակի երգ, սէր եւ ծաղիկ, խունկ եւ համբոյր ամենուն:

Եւ անոնց՝ ինչպէս Վարդանանց. որովհետեւ նոյն էր դաւոր անոնց՝ ինչ որ էր Վարդանանցը:

Եւ ստուգիւ մեր հոգեշունչ Հայրերը մեր հին Նահատակներու տօնին օրն երգած են. « Պայծառացան այսօր եկեղեցիք... Զուարթնոց երկնից եղեւ ցնծութիւն, տեսանելով զարեամբ զարդարեալսն կոչեցեալ յուրախութիւն աստուածային եւ լուսաւոր սուրբ առագաստին. պատրաստեալ նոցա զյաղթանակ մարտին... Եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան, ունելով միշտ բարեխօս զճգնութիւն մարտի սոցա »:

Ահա այդ շունչով պէտք է օծուի եւ ներկայացուի մեր նորեկ սերունդներուն մեր նուիրական տօնը, եւ անմահօրէն խնկարկուի քաղցր յիշատակը մեր պաշտելի ծնողաց:

Սուգն եւ արտասուքը պահենք անոնց համար որ արժանի են. « Ախտակցաբար արտասուեսցուք զուրացողն հաւատոյ ». ու նաեւ զանոնք որ գիտակից ու անգիտակից՝ զուրկ եւ հեռի կը մնան գեղեցիկ անունէն հայրութեան, եւ շնորհքէն սրբալոյս միւռուսին՝ որ դեռ կը բուրէ իրենց ճակտին: Ո՞հ, որքան սրտակեղեք է այս մտածութիւնը, որքան տխուր է խորհիլ պահ մը սեւացած, թխացած, պղծուած հոգիներ՝ մինչ անդին հազարներ ու բիւրեր ծիրանեփառ, լուսազգեստ երկինք սաւառնած, տիրած թագի ու գաւազանի երանական հայրենիքին մէջ: Ո՞հ, որքան անմասն եղբայրներ:

Եւ երանի՜ թէ այդ խոր սուգը կարեկից ձեռքեր շատցնէ եւ երկնցնէ մինչեւ հոն՝ ուր կ'ապրին մեր ոսկրներն ու մարմինը, մաս մը մեր հոգիներուն, որոնց գիւտը կըրկնակի յարութիւն պիտի ըլլայ, իրենց նախ եւ ապա մեզի:

* * *

Աւելցնենք խորհրդածութիւն մ'ալ որ մեր Նահատակներու դատին հետ այնքան սերտ աղերս ունի:

Տարիներէ ի վեր հեծանո՞ս թէ անգիտակից մտքերու կողմէ - չեմ գիտեր - նորոյթի կարգ է անցեր գրել ու հանդիսաւորապէս ընկերական ակումբներու մէջ հակահառուծեան նիւթ ընել. « Քրիստոնէութիւնը օգուտ ըրեր է հայութեան թէ միայն » եւ կամ հարցը սա ձեւին տակ « Հայութիւնը ազգովին աւելի երջանիկ պիտի ըլլար հեթանոս մնալով՝ թէ քրիստոնէայ դառնալով »:

Ողջամիտ քրիստոնէայ հայու մը համար հարցը իր երկու ձեւին տակ ալ անտեղի է ու ծիծաղական: Եւ իսկապէս այդ դրութեամբ հարցը կամ կ'ուրանայ հոգին եւ կամ տարակոյսի տակ կ'ուզէ ձգել անմահութիւնը, գերբնականը, անդէնականը ուստի եւ Քրիստոսի կատարած փրկագործութեան պատմական, իսկական հրաշալի եղելութիւնը եւ կամ վերջինս կը նկատէ մարդկային ու անարժէք բան մը:

Երկու տեսակէտով ալ անտեղի. քանի որ կը թուի ծիծաղիլ մարդկութեան այդ ամբաւ բազմութեան վրայ որուն բանաւոր եւ փաստացի հաւատքը, քրիստոնէութեան պատմականութիւնը իր բոլոր հրաշալիքներով կը բողոքէ ասոր դէմ եւ նոյնինքն մեր ամբողջ ազգին եւ Հայրերու երկհազարամեայ խօսքն ու գործը, գիրն ու գրականութիւնը, գեղարուեստն ու տաճարները, իրենց կեանքն ու մահը: Վերջապէս անարժան բաղդատութիւն մը եւ անտեղի այնքան՝ որքան է ճշմարտութիւնն ու ստուծիւնը, լոյսն ու խաւարը բաղդատութեան եւ ընտրութեան դէմ: Եւ մենք հարկ մը չենք տեսներ հոս քրիստոնէութեան ջատագովութիւնն հիւսելու:

ԶԱՐԾԱՆԱԼԻ եւ սակայն պատմականօրէն ստոյգ է որ մեր հայ կեանքի ճգնաժամերը եւ մահաւանդ անոնց մեծագոյնները՝ մեծագոյն եւ հրաշափառ անկիւնաքարերը կամ դարագլուխները կը կազմեն մեր փառահեղ պատմութեան:

Խօսքերնիս կ'ամփոփենք քրիստոնէայ շրջանին:

Ճիշտ այն պահուն՝ երբ սրախողխող կ'ըլլար Խոսրով Անակի դաւով, Գրիգոր Կեսարիա կը տարուէր ու հոն քրիստոնէութեան մէջ կը դաստիարակուէր: Եւ անա մեր լուսաւորութեան դարագլուխը իր խանձարուքին մէջ:

Ղազար Փարպեցւոյ տխուր էջերուն բովանդակութիւնը ծանօթ է: Հայ Ժողովուրդը այլալեզու ճէսերու անպտղութեամբ սոված կը հեծէ, եւ օտարացման սեւ ճակատագիր մը կը սաւառնի հայրութեան վրայ:

Եւ անա Մեսրոպ որ հայ գրին յղացումով հայ ցեղին գոյութիւնը կը փրկէ:

Ո՞վ կ'անգիտանայ թէ մեր փոքրիկ հայ պետութիւնը մէկուկէս միլիոն նահատակներու արեան ծովէն է որ ծնաւ:

Բայց ատկէ առաջ յիշենք մեր հինաւորեց քաղաքակրթութեան մոռացութեան ու Թաղումի դարերը թե-թէ, ուր եթէ երբեք լոյսեր ունեցանք՝ ասուպներ էին վաղանցիկ:

Ճիշտ այդ դարուն էր որ ծագեցաւ Լուսանորոգն Մխիթար, որուն անունը ազգային հեղինակ մը Սահակի եւ Մեսրոպի փառապանծ անուններուն քով դրաւ՝ Հայ գրականութեան « սրբազան երրորդութիւն » կոչելով երեքը:

Խոնարհ ծագում մը՝ որ անաւոր երկունքներով լոյսը կը ծնի իր ազգին: Անոր ի տես կը բերկրին բարի ոգիներ, եւ տեսիլքը կը գծուի լերան մը ստորոտէն դէպ ի վեր՝ ուր Մանուկ - Մխիթար սառնակոյտեր կը հալեցնէ տառապանքի քրտինքով եւ սիրով, ու կը հարթէ կեանքի ուղին դէպ ի բարձունքն երջանիկ:

Տեսիլք մը՝ գծուած Նախախնամութեան ձեռքով, իրականացած Մխիթարայ կեանքով, զոր վայելած է ազգը 233 տարիներու ընթացքին:

Մխիթար կը ներկայանայ որպէս մարգարէն հայ ցեղին. իր վերամբարձ ոգւով միանգամայն կը տեսնէ անցեալն ու ապագան. անցեալին լոյսերն է որ իր հոգիէն անցուցած կը փոխանցէ ապագային եւ ինք կը մնայ օղակը անոնց զուգաւորութեան:

Ըլլալ լոյս եւ յարատեւ լուսաւորել. ըլլալ առաջնորդ եւ տանիլ ազգը դարերու ընդմէջէն դէպ ի նոր կեանք: Ահա տեսլականը՝ որուն համար Մխիթար ոչ ոք գտաւ իրեն օգնական:

Եթէ դժուար է գտնել մէկը որ անգիտանայ Մխիթարայ տան պատմութիւնը, դերը զոր կատարեց ու կը շարունակէ հայ մտքին, սրտին եւ հոգւոյն իմացական եւ բարոյական վերածնունդին մէջ, բայց կարծեմ շատեր կան որ չեն ըմբռնած թէ վերածնունդի մեծի ծրագիրը որ իր բոլոր մասերով իրականացաւ Զամչեանի, Ինճիճեանի, Աւետիքեանի, Աւգերեանի, Բագրատունիի, Հիւրմուզի, Ալիշանի եւն. պատմական ու լեզուական, կրօնական ու գիտական հրատարակութիւններով՝ իբրեւ նախատիպարի մէջ՝ ամփոփուած էր Մխիթարայ հոգւոյն մէջ. եւ եթէ մէկը դժուարի զայդ ընդունիլ իր մեծութեան, ընդարձակութեան եւ խորութեան մէջ, հարկ պիտի ըլլայ իրաւամբ Աստուծոյ մատը տեսնել հոն, ինչպէս իրաւցնէ պատահեցաւ իր Ժամանակակիցներէն շատերուն, որոնք համեմատելով Մխիթարայ խոնարհ ծագումն ու զարգացման կեդրոններն եւ կատարած ուսումները՝ խոստովանեցան թէ պարզապէս մարդկային ու ժերով կարելի չէր կանգնել այդպիսի գործ եւ այդպիսի ծրագիր եւ անոր դրոշմել այդքան վճռական սահմաններ եւ տեսականութեան կնիք:

Եւ այնքան ցայտուն էր գերբնականին միջամտութիւնը որ այդ իմաստուն հոգիներէն կարկառուն դէմք մը Մխիթարն արեգակ եւ Բ Լուսաւորիչ տարփողեց, եւ իր գործը աստուածային, որուն դէմ մաքառողը՝ ուղղակի Աստուծոյ գործին դէմ կը մաքառէր:

Միևնարայ կոչումը տեսանք տեսիլքով մ'ուրուագրուած, ուր ան ռահվիրայ կը հանդիսանայ երկնաչու համբուն: Իսկ իր կեանքն ու ամբողջ տիպարը կարելի է նըշմարել դրուագի մը մէջ որ նոյնպէս ապագայի գուշակութեան բնոյթն ունի. Սիրոյ եւ եղբայրութեան ոգին:

Խուլ աղմուկ մը կար որ հետզհետէ կը զօրանար եւ կը յուզէր հայ ժողովուրդը Կ. Պոլսի մէջ. եղբայրադաւ կռիւ մը որ ծայր կու տար կրօնական հարցէ մը: Այլագգի իշխանութեան ատենանին առջեւ ամօթալի տեսարան պիտի բացուէր: Բայց Միևնար բեմէն սէր քարոզեց, բեմէն խաչն առած ինքզինք ներկայացուց առաջին զոհ: Եւ իր խօսքին եւ գործին յաղթանակով կրնար ուրախանալ:

Այդ ոգին էր որ գործեց իր աշակերտներուն մէջ, եւ իր աշակերտներու հոգևով սնած բարի հոգիներու մէջ: Ամօթալի կռիւներու վերջ տալու համար Պէշիքթաշլեան սիրոյ եւ եղբայրութեան քնարն առած մէկ համբոյր կը պահանջէր, որուն շնորհիւ բախտին ամէն ոխ չարանենդ հեռու պիտի ցրուէր: Այդ տեսակէտով մեծ դեր մ'ունէր անշուշտ կատարելիք «Համագգեաց Ընկերութիւն»ը հիմնուած Հ. Պետրոս Միևնարի նախածեռնութեամբ, հրահրուած Պէշիքթաշլեանի կուսական հոգևով, եւ իր հետ այնքան ազնիւ եւ բարի տիպարներով: Դժբախտաբար դարը չկրցաւ ըմբռնել փրկարար դերն այդ հաստատութեան, եւ կասկածանքներ ու հալածանքներ մարեցին վառարան մը՝ ուր այնքան սէր պիտի վառէր:

Դար մ'անցաւ, մեծ միւրիկ մը մեզ խորտակեց, ու մեր ցաւի ահագնութեան մէջ հարկն զգացինք անոյշ եղբայրութեան, որ պաշտօն պիտի ունենայ հետզհետէ ձուլել սիրտ եւ հոգի. ուրախ ենք ողջունել Սիւրիոյ մէջ «Համագգեաց Ընկերութեան» մը յարուստիւնը. ինչ չափերով, ինչ պայմաններով ալ ըլլայ ան՝ միշտ զուգուածին մըն է, եւ պաշտելի Եղիշէն հեռուոր դարերէն մեզի կ'ըսէ. «Զուգուածին է մայր բարեաց»: Եւ Միևնար կրնայ հրճուիլ միշտ իր տեսիլներու նորանոր փոթութեամբներով:

Հ. ԵՂԻՍ ՓԷՁԻԿԵԱՆ

ԴԱՐԱՄԻՋԻ ԺԱՄԻՆ

(ԺԹ - Ի)

Ինչպէս երկու ահեղ սարեր,
Պատում են մեզ երկու դարեր —
Մէկի ետեւ հեքիաթ հին հին,
Միւսի ետեւ լուռ ու մըթին,
Եւ մենք նրանց նեղ արանքում

Լաց ենք լինում, սիրում, խնդում...
Աւաղ, կ'անցնին սէր, խինդ ու լաց,
Եւ խղճալի աճիւն կտրած
Մեզ կը փակեն երկու դարեր
Ինչպէս երկու ահեղ սարեր:

1901 տարեմուտին (Յամպատրաստից)
(Ամստիպ), «Գրական թերթ»էն 31 Մարտ 1933

Յ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՇԽԱՐՆԵՐ ԵՒ ՆՇՄԱՐՆԵՐ

Ի ՏԱԼԻՈՅ ՄԷՋ

Ա. Ի ՀՈՌՈՄ

ԳՈՒՑԷ զարմանալի թուի մեր ազգայիններուն թէ ինչպէս մինչեւ այսօր չենք ունեցած լիակատար պատմութիւն մը ի տալիոյ մէջ հաստատուած հայ գաղթականութիւններուն՝ սկսեալ Ռուբինեանց շրջանէն, և միանգամայն ամփոփում մը այնքան սիրուն և սիրալի, երբեմն ալ տխրալի վաղեմի յիշատակներուն որոնցմէ շատեր դեռ կ'երեւին այսօր այս երկրին մէջ, և շատեր ալ դժբախտաբար անհետացած ու մոռցուած են: Դիտում ունինք, հետեւաբար, ըստ կարելւոյն ամփոփել ցիրուցան տեղեկութիւնները հայկական այս յիշատակներուն և ջանալ աւելցնել անոնց վրայ՝ եթէ կարելի է՝ նորեր, որքան որ թոյլ կու տան պրպտելու և ուսումնասիրելու միջոցները:

Երախտագէտ սրտով պէտք է յիշենք սակայն Հ. Ալիշանի անունը, քանի որ ինք որպէս մասնական ուսումնասիրութիւն՝ տուած է «Հայ Վենետ», հոս հաստատուած հայ գաղութին մանրամասն պատմութեամբ, սկսեալ 1400 թուականէն: Ինչպէս դրուագներ «Սիսուան»ի մէջ, ուր կը խօսուի յատկապէս Այաս՝ նաւահանգստին վրայ և իր առեւտրական յարաբերութեանց՝ Արեւմուտքի հետ, ամփոփ ակնարկներ իտալիոյ քանի մը քաղաքներու մէջ հաստատուած ցայտուն գաղթականութեանց:

Յարմար կը դատեմ Հոռմով սկսիլ՝ Ս. Տարին առիթ առած, և ուր պատմականօրէն ալ շատ են հնագոյն յիշատակներ՝ մանաւանդ ուխտաւորներու որոնցմէ շատեր եթէ Ս. Պետրոսի և Ս. Պողոսի գերեզմաններուն համբոյրէն վերջ կը դառնային,

սակայն ուրիշներ ալ կը մնային և որպէս հայ անմահ անուն մը թողուին: Ահա Պրոյերեսիոս աշխարհահռչակ հռետոր մը, ինչպէս խորհնացի մը, և նմաններ՝ որոնց անուններուն պիտի հանդիպինք:

Հոռմէն սկսելու առիթ կ'ընծայէ մեզի նաեւ անցեալ տարի հոն հրատարակուած «Il Piccolo» օրագրին (8 Յունիս, 1932) մէջ երեւցած յօդուած մը քրոնիկի բաժնին մէջ՝ «Gli Armeni a Roma» որ թէեւ համառօտ, սակայն բաւական թուով հին ու նոր յուշեր և յիշատակներ կը շօշափէ, որոնց մասին պիտի խօսինք մենք ալ:

Յիշեալ յօդուածին հեղինակը Alarico Lanzi յետ համառօտ ակնարկելու Հայոց քրիստոնէութեան դարձի պատմութեան Ս. Գր. Լուսաւորչի ձեռքով՝ կ'ըսէ թէ 314 - 319 թուականներուն Լուսաւորչի առաջնորդութեամբ հայերն «առաջին եղան ազգերուն մէջ որ Հոռմ ուխտի եկան իրենց նորադարձ Տրդատ թագաւորին հետ, ինչպէս կը յիշէ Ագաթանգեղոս՝ հայ պատմագիր Ե դարուն (ուղղէ Գ դարուն)»:

Որքան որ հին է այս աւանդութիւնը և Ագաթանգեղոսի բով մանրամասնօրէն պատմուած՝ (ուր Եւսեբիոսը պէտք է փոխել Սեղբեստրոսի, 314 - 335, ինչպէս նաեւ սրբազրուած կը տեսնենք Տիգրիսի 1909ի տպագրութեան համեմատութեանց մէջ), յետոյ նոյնպէս խորհնացւոյն «Գնալն

1. Տե՛ս Սիսուանէն քաղուած և Քրանսերէն լեզուով հրատարակուած «Ayas, son port, et son commerce et ses relations avec l'Occident», տպ. վ. Ս. Ղալաթ 1899.

2. Տե՛ս Ագաթ. Պատմ. Գլ. ԻԶ, տպ. վ. Ենեւ. 1930, էջ 643-648.